

ազոտաթթվական, бромоводистокислый-
հիպոբրոմաթթվային և бромоводород-
քրոմաթթվական և այլն: 1957 թվականի ոռու-
հայերեն պոլիտեխնիկական բառարանում այս
կարգի տերմինների ճնշող մեծամասնության
հայեցման համար օգտագործված են նրանց
հունա-լատինական անվանումների հայերեն
տառադարձությունները (նիտրատ, նիտրիդ,
քրոմիդ, քրոմիտ, քլորիդ, քլորատ և այլն),
իսկ հայերեն բառերով թարգմանությունները
քիչ են և ոչ միտրինակ:

Հեղինակները հիմնականում ճիշտ են կա-
տարել օտար, սոսիալված տերմինների հա-
յերեն տառադարձությունները, հաճախ էլ ճշտել,
ուղղել են նախկինում կատարվածները: Աս-
կայն, այնուամենայնիվ, բառարան են սպրդել
մի քանի տարօրինակ, հայերենին խորթ ձևեր,
ինչպես՝ Պերսեոս (տե՛ս Арголь բառափո-
վածում, ի դեպ, Շույն բառարանում Персей
գլխաբառը տարադարձված է ճիշտ՝ Պերսևս),
Օռ էլ. փչգ. Օմ (բառարանագիրները, մեր
կարծիքով, սխալվում են՝ մերժելով օմ տա-
ռադարձությունը): Կամ էլ՝ арха- (< հունա-
քեն առ. -) մասնիկով կազմված բառերի մի
մասը, որոնք հայերեն գրված են արևել տա-
ռադարձությամբ (археи երկրբ. արխել (ծա-
մանակաշրջան), археозоокии-արխեոզոյան,
архотрав-քովթար, արխիտրավ և այլն):
Մեր կարծիքով առավել ճիշտ կլիներ հիշյալ
նախածանցը տառադարձել հայերենի համար
ավանդական արքի- ($x > p$) ձևով: Այսպես
նաև тахх, тахео-, тахо- («հուն. тах-
ձևերից) անանցներում (тахометр, тахиметр,
тахокимовазометр և այլն) և ընդհանրապես
հունական ծագում ունեցող տերմիններում
ոռ սերենի x-ն (< հուն. χ) տառադարձել
հայերեն ք-ով:

Ջննարկվող բառարանը մի խոշոր, ըս-
կըզուրուքային նորամուծություն է կատա-
րում հայ բառարանագրության մեջ: Առաջին
անգամ օտարալեզու-հայերեն մասնագիտա-
կան բառարանի վերջում կցված է մի ծավա-
լուն (մոտ 150 եռասյուն էջ) հավելված, որը,
փաստորեն, հիմնական բառարանի շրջված,

համառոտ տարբերակն է: Սույն աշխատան-
քում այն կրում է «Հայ-ռուսերեն պոլիտեխնի-
կական բառարան» վերատառությունը: Այս
մասը իհարկե միայն վերապահորեն կարելի է
անվանել հայ-ռուսերեն բառարան (սա ընդու-
նում են նաև բառարանի կաշմողները, էջ 6):
Հավելվածում տեղ են գտել հայերեն միայն
գլխաբառերը, որոնց մոտ նշված է նրանց
գործառության ոլորտը: Տերմինային կապակ-
ցություններ չկան (սրանք կարելի է գտնել
բուն բառարանում՝ ռուսերեն գլխաբառի
քնում): Այս հավելվածը, ինչպես նշված է
գրքի առաջաբանում, հնարավորություն է տա-
լիս նաև «պարզել հայերեն տեխնիկական
տեքստերում հանդիպող անծանոթ տերմին-
ների իմաստը» (էջ 6) Ավելացնենք նաև, որ
հավելվածում պարունակվող հարուստ նյութը
(7000-ից ավելի գլխաբառ) կարող է օգտա-
գործվել հայերենի հետազայի բացատրական
և թարգմանական մասնագիտական բառարան-
ների բառացուցիկ համալրման համար:

Սմփոփենք: Ռուսերեն բառացանկի քանա-
կով և տերմինների ընտրությամբ, ավանդա-
կան և ժամանակակից գիտությունների տեր-
մինային համակարգերի ընդգոյմամբ, տեր-
միններին տրվող կիրառական տարբեր քնա-
զավառների և ոլորտների համապատասխան
նշումներով, հայերեն թարգմանական համա-
գորների համապատասխանությամբ սույն բա-
ռարանը աննախադեպ երևույթ է ռուս-հայե-
րեն տերմինաբանական բառարանագրության
մեջ: Հատկապես անհրաժեշտ է նշել հեղի-
նակների կատարած մեծ աշխատանքը պոլի-
տեխնիկական հայերեն տերմինների ընտրու-
թյան, հավաքման, շատ տերմինների կազմ-
ման, այդ բնագավառի տերմինային համա-
կարգի կարգավորման և միօրինակացման
ուղղությամբ: Այդ առումով բառարանի հայ-
կական մասը հարուստ նյութ է պարունակում
բառակազմական, տերմինաբանական ուսում-
նասիրությունների համար:

Դ. Հ. ՅԱԼԱԶՅԱՆ

Ղ. Ա. ХУРШУДЯН. Истина – единственный критерий историче-
ской науки. Изд. Ереванского университета. Ереван, 1989, 46 стр.

Ղ. Ա. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ, Ժմարտությունը պատմական գիտության միակ չափանիշն է,
Եր. համալսարանի հրատ., 1989, 46 էջ:

Շրևանի պետական համալսարանի հայ ժո-
ղովրդի պատմության արմինի վարիչ, պատ-
մական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հայաստանի Գիտությունների ակադեմիայի
թղթակից անդամ Ղ. Ա. Խուրշուդյանը արդի
հայ պատմագիտության աչքի ընկնող դեմ-
քերից է: Անուրանալի է պրոֆեսոր Ղ. Ա.
Խուրշուդյանի ավանդը հայ ժողովրդի նոր

և նորագույն պատմության ամենատարբեր
խնդիրների գիտական մշակման գործում: Նրա
շատ աշխատություններ ոչ միայն նոր ու մը-
նայուն խոսք են հայ պատմագիտության մեջ,
այլև դրանք մատնանշում են այն ուղիները,
որոնց շնորհիվ կարելի է դառնում ձեռնա-
մուխ լինել կատարվածի՝ գիտական ընդհան-
րացմանը և պատմաբանական վերլուծությա-

Ար: Լ. Խորշուղյանը առաջիններից մեկն էր, որ քաղաքականին մեծ հաջողությամբ սկսեց գիտական պրպտումներ կատարել Լեոնային Ղարաբաղի ոչ վաղ անցյալի պատմության հարցերի ուսումնասիրության բնագավառում: Այդ աշխատանքներն անփոփոխեցին «Լեոնային Ղարաբաղ. պատմական տեղեկանք» (ոուս., 1988) կոլեկտիվ մեծագրությունում¹, «Լեոնային Ղարաբաղի պատմության մի քանի հարցեր»², «Մշմարտությունը Լեոնային Ղարաբաղի մասին»³ հոդվածներում (հեղինակակից՝ Վ. Միքայելյան) և վերջին շրջանում լույս տեսած մի քանի այլ ուսումնասիրություններում: Լեոնային Ղարաբաղի պրորոբևի հետ աղերսված Ադրբեջանում բորբոքված հակահայկական հերթական հիստերիայի պատճառների ու նպատակների բացահայտմանն է նվիրված պատմաբանի «Մշմարտությունը պատմական գիտության միակ չափանիշն է» գրքույկը:

Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզի քաղաքական և բարոյական լուրջ պրորբևը կյանքի կոչեց հոդվածների, գրքույկների, գրքերի մի հսկայաթիվ թագմություն՝ գրված տրամագծորեն հակադիր դիրքերից և հակադիր նկատառումներով: Ընթացավ և ընթանում է փաստական առճակատում պատմական իրականության և նրա ենճգափոխման, գիտական բարեխղճության և գիտության սանճարճակ խեղճանման միջև: Խորհրդային իշխանության գոյության տասնամյակների ընթացքում խճամքով շարված և իճներճացիոճակիվ կեղծ ու մտացածին քողով երեսապատված և երկրի որոշակի ռեգիոճներում քաղաքացիության իրավունք ստացած՝ ազգային հալածանքների, ազգային արճանապատվության ոտնահարման, ազգային մշակութային ճառնագության յուրացման, ազգային պետական տարածքների սեփականացման այլաճղակ պատկերը մեր առչն հառնեց շնորհիվ հայկական Արցախի ըմքոտացման և խորհրդային իշխանության ազգային քաղաքականության սնանկացման մերկացման:

Կայսերապաշտական իր դարճ այրած ազգային քաղաքականության անպատկառ պաշտպանությունը, խորհրդային մի քանի հանրապետությունների միճի-կայսերական հավակնությունների խրախուտումը ակնհայտ դարճրին «վերակառուցում» անվան տակ հանդես եկող խորհրդային կառավարության քաղաքական ընթացքի ամբողջ կիսատպոս:

¹ Այճմ տպագրության է պատրաստվել սույն մեճագրության երկրորդ՝ բարեփոխված ու լրացված հրատարակությունը:

² Տեճս «Լրաբեր Հայաստանի Գիտությունների ակադեմիայի» (հասարակ. գիտ.), Ձճ 4, 1988:

³ Տեճս «Նոր կյանք» օրաթերթ (ԱՄՆ), 28 ճոյնմերի 1989:

տությունը և, տվյալ դեպքում, երեսապաշտական բնույթը: ԼՂԻՄ-ի հարցը այճքան պարզ ու հստակ էր, որ կարելի էր վայրկեճապես լուծել վիրաբուճական անմիջական միջամտությամբ: Դրա փոխարեն մենք վկաները դարճանք անբանական ճգճգումների և դրանց հետևանքով հեղված արյան հորդահոս գետերի, սումզայթների, կիրովաբաղների, բաքուների...

Լ. Խորշուղյանի գրքույկը, մերկացնելով ադրբեջանական կողմի և այդ կողմի մտայնությունը արտահայտող «պատմաբանների» սանճագերճած հակահայկական արշավանքի պատմական իրադարճությունների խեղաթյուրման սանճարճակ հենքի վրա կառույցված ենճգափոխումները, ընթերցող լայն հասարակայնությանն է ներկայացնում պատմական վավերագրերով հիմնավորված պատմական եղելություններ:

Լ. Խորշուղյանը, վկայակոչելով պատմական անհերքելի փաստերը, ցույց է տալիս Ղարաբաղի հայության 1918—1928 թվականներին ճավալած անգիշում պայքարը հանուն միասնության իր մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ, չճայած ամեն տեսակի անպող իմպերիալիստական միջամտությունների, լիճի դա անգլիական, թե ճորաստեղծ խորհրդային իմպերիալիզմի կողմից:

Աշխատանքը բաղկացած է չորս հիմնական բաճիճներից: Առաջին բաճիճը, որը խորագրված է «Որոճք են Ադրբեջանում ճավալված հակահայկական կամպանիայի ճորփուլի պատճառները», վեր է հանում «Եառուսաթի բաճոչն» և մամուլի ադրբեջանական այլ օրգանների հակահայկական հոդվածների էությունը, հատկապես Գուլիևի և Քոչարլիի կեղծիքների իսկական նպատակները: Հեղինակը կարողացել է ցույց տալ, որ Ադրբեջանում և մասնավորապես նրա պատմական գրականության ներկայացուցիչների շրջանում այճմ տիրապետում է ազգայնական, հակահայկական հիստերիան, որի նպատակը Արցախը աղվանական, այճ է՝ ադրբեջանական հոչակելն է:

Աշխատության երկրորդ բաճում հեղինակը մերկացնելով ադրբեջանական կողմի շիճնու տեսակետներն այճ մասին, թե 1918—1920 թվականներին Լեոնային Ղարաբաղը գտնվել է մասնավորապես Ադրբեջանի կազմում, ցույց է տալիս, բերելով անհերքելի թագմաթիվ փաստեր, որ դա իրականությանը չի համապատասխանում, և Արցախը երբեք էլ չի գտնվել Ադրբեջանի կազմում:

Երրորդ բաճիճը՝ 1920 թ. դեկտեմբերի 1-ի դեկլարացիայի շուրջը ճավալված ադրբեջանական կողմի «վերլուճական» ջանքերի ջրճնադատությունն է, իսկ 4-րդ բաճիճը նվիրված է 1928 թ. Ղարաբաղում իբր թե կազմակերպված հանրաքվեի ադրբեջանական լեճեճի մերկացմանը:

Գրքույկի բովանդակությունը վերստին ապացուցում է, որ, հիրավի, պատմական գիտության միակ չափանիշը կարող է լինել և է ճշմարտությունը, որ ճշմարտության անտեսումը կարող է հանգեցնել միայն պատմական անարդար լուծումների, իսկ դրանք անպայման հղի են աննախատեսելի հետևանքներով:

Լ. Խորշուդյանի ամբողջ շարադրանքի միջով կարմիր թելի պես անցնում է այն անառարկելի միտքը, որ Հայաստանի և հայ ժողովրդի ազգային իրավունքները ստոր կերպով ոտնահարվել են հոգուտ Ադրբեջանի և Թուրքիայի մեծապետական շահերի, որ ոչ ոքի իրավունք չի վերապահված, լինեն դրանք կոմունիստներ, թե պանթուրքիստներ, Խորհրդային Հայաստանից կորզված նրա տարածքի մի մասը և հայ ժողովրդի մի հատվածը թողնել ադրբեջանական ազգայնամուտների գաղութային լծի տակ: Ինչպես այստեղ չմտանանջես ոուս համբավավոր գրող Ա. Ի. Սոլժենիցինի «Ինչպես շենացնել Ռուսաստանը» աշխատություն հետևյալ հատվածը. «Հետևանք Իլիչ-առաջինը սամանների հարցը անվանում էր «նույնիսկ տասներորդական» (այդպես էլ Ղարաբաղը կորեցին-սովին Ադրբեջանին, ի՞նչ տարբերություն՝ որտեղ, այդ պահին պետք էր հաճոյանալ սովետներ

րի սրտակից բարեկամին՝ Թուրքիային)»⁴: Ավելին չես ասի:

Լ. Խորշուդյանի սույն աշխատանքը գրված է պրոֆեսիոնալ բարձր հմտությամբ, խորը գիտականությամբ ու բարեխղճությամբ: Այն լավագույններից մեկն է՝ նվիրված Արցախի պրոբլեմին և հատկորեն ու համակողմագիրուն ընթերցողների համար բացահայտում է պրոբլեմի բոլոր էական կողմերը: Նշելի է հատկապես հեղինակի քաջատեղյակությունը ադրբեջանական արդի պատմագիտությանը, այստեղ կատարվող միտումնավոր, հակահայկական աշխատանքներին:

Լ. Խորշուդյանի գրքույկը և՛ գիտական, և՛ քաղաքական, և՛ բարոյական նորմերի՝ հարգման առումով մի լավագույն գիտական գործ է՝ կատարված գիտնականի անաչառությամբ և դրանից բխող կրքոտությամբ:

Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ
Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

А. И. Солженицын. Как нам обустроить Россию. (Посильные соображения), см. «Коммунистская правда», 18 сентября 1990 г., специальный выпуск. Брошюра в газете, стр. 2, տե՛ս նաև «Երեկոյան Երևան», 22 սեպտեմբերի 1990 թ.:

THIERRY J. M., DONABEDIAN P. Les Arts Arméniens.—Paris: Editions Mazenod, 1987, 623 էջ լուս.:

Ժ. Մ. ԹԻԲԵՐԻ, Պ. ՏՈՒԱՊԵՏՅԱՆ: Հայկական արվեստ, Փարիզ, «Մապե-նո» հրատարակչություն, 1987, 623 էջ, լուս.:

Հայ արվեստի տարբեր բնագավառներին, հատկապես ճարտարապետությանը նվիրված օտարալեզու գրքերի ցանկը հարստացավ ևս մեկով՝ Ժան Միշել Թիբերի և Պատրիկ Տանպեայանի «Հայկական արվեստ» մեծածավալ գրքով: Թանկարժեք է այդ պատճառով ոչ բալթրին մատչելի այս ընտիր աշխատությունը լայս է ընծայել աշխարհահռչակ «Մազենո» ճարտարապետությունը:

Գիրքը բաժանված է վերջերս շատ հստախ ընդունված ձևով, երկու մասի. նախ՝ հողվածների պատմական ու տեսական բաժինը և հետո՝ ճարտարապետների համահավաք այլբենական ցուցակը: Վերջին ձևով է հրատարակվել նաև իտալացի Պ Կունեոյի խմբագրությամբ լայս տեսած «Հայ ճարտարապետություն» երկհատարակը, Ռ. Էդուարդի «Հայկական Կիրիկիայի ամրությունները» գիրքը, «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարի՝ Անի, Պողնի/Արուն, Ղարաբաղ և վերջին՝ Սորհույ ճատարները, և այլն:

Աշխատությունը սկսվում է գրքի խմբագիր Անն դը Մարձբրիի ծայկական մշակույթը ներ-

կայացնող համառոտ ճատարակչական ակնարկով: Նա գրում է, որ սկսած 19-րդ դարից հայ արվեստը գրավել է Արևմտաֆի ուղադրությունը, իսկ այսօր նա ունի իր մնայուն տեղը համաշխարհային ֆաղաակրթության բանգարանում: Սակայն գոյատևելով բացառիկ երկար մի ժամանակահատված և ծնելով ճարտարապետական, մանրանկարչական ու գեղարվեստի այլ զույգագործացներ, հայ մշակույթը գրավում է մի առանձնաշնորհյալ դիրք մյուս երկրների շարքում: Քիչ ժողովուրդներ են ունեցել նման ծայրահեղ ողորդական նակատագրեր, շարունակում է խմբագիրը, և դրանով հանդերձ ուժգտել հարատևելու և, ամենակարևորը, տրամադրություն ունեցել ստեղծագործելու: Ներկայացնելով ուսումնասիրության նեղիեակներին՝ Անն դը Մարձբրին գրում է, թե Փարիզի Արևվելյան լեզուների ինստիտուտի հայ մշակույթի պատմության դասընթացի դասախոս, դոկտ. Ժան Միշել Թիբերին նեղիեակն է գրքի առաջին հատվածի, իսկ արվեստի պատմության ղոկտոր և ԽՍՀՄ Գեղարվեստից ակադեմիայի արվեստագիտության ղոկտոր Պատրիկ Տանպեայանը